ՀՀ երեք վարչապետները շնորհավորեցին Խ. Հայաստանի երկարամյա վարչապետին

Անհամար շնորհավորանքներ ու երախտիքի խոսքեր ասվեցին երեկ Թեքեյան կենտրոնում՝ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանի ծննդյան 85-ամյակն էր նշվում: Ասվածը բազմաբովանդակ էր, ինչպես եւ հոբելյարի կյանքն ու գործունեությունը: Առանցքայինը, սակայն, նրա հայրենասիրության ու նվիրումի մասին էր: «Տարիներ առաջ երկրի վարչապետը հրապարակայնորեն եւ առանց ամոթի լաց էր լինում՝ այրվում էր մարզահամերգային համալիրը: Իսկ դա մեծ ափսոսանքի արգասիք էր, որ ոչնչանում էր աչքի առաջ եւ պետք է վերականգնվեր», երկրի հանդեպ Ֆադեյ Սարգսյանի՝ խորհրդային տարիներին որպես վարչապետ 12 տարի պաշտոնավարած անձի արտացայտությունը այսկերպ փաստեց Հայաստանի Թեքեյան մշակութային միության նախագահ **Ռուբեն Միրզախանյանը**:

Հոբելյարի ժամանակակիցները, որ նաեւ նրա գործընկերն են եղել, ջերմորեն խոսեցին Ֆադեյ Տաճատիչի մասին՝ միաբերան փաստելով նրա վաստակի նշանակալիությունը Հայաստանի արդյունաբերության ու պաշտպանության ոլորտների զարգացման հարցում: Պակաս ջերմ չէին անկախ Հայաստանի վարչապետների խոսքերը:

«Շինանյութ պետք է տանեինք Ղարաբաղ: Արդեն կրակոցներ ու մահեր կային՝ դժվար էր, վտանգավոր: Շարասյունն ընթանում էր: Կողքից իր մեքենայով Ֆադեյ Սարգսյանն էր ուղեկցում եւ ուղեկցեց մինչեւ վերջ: Նրա համար կարեւորը երկիրն էր ու ժողովուրդը: Եվ խորհրդային տարիների Հայաստանի հաջողությունները բացատրվում են հայ ղեկավարների հայրենասիրությամբ: Նոր էի նշանակվել վարչապետ, խորհրդի համար դիմեցի Ֆադեյ Սարգսյանին: Առաջին հերթին շեշտեց, որ էներգետիկ խնդիրները լուծենք ու պատրաստակամություն հայտնեց դրա համար աշխատել՝ որ ու գիշեր», ՀՀ առաջին վարչապետ **Վազգեն Մանուկյանն** այս հիշողության փաստմամբ անդրադարձավ հոբելյարի վաստակին:

Նախկին վարչապետ **Խոսրով Հարությունյանն** էլ փաստեց. «Ֆադեյ Սարգսյանի հետ աշխատելը չափազանց ուսանելի է եւ այսօր շնորհավորանք չէ՝ շնորհակալություն եմ հայտնում Ձեզ: Խորհրդային տարիներին շատ դժվար էր որոշում կայացնել ու դիմանալ հանրապետությունների միջեւ եղած դաժան մրցակցությանը, բայց այդ ժամանակաշրջանը Հայաստանի համար արդյունավետ դարձավ Ձեզ նման նվիրյալների շնորհիվ»:

Հայաստանի Հանրապետության ներկայիս վարչապետ **Տիգրան Սարգսյանն** էլ կառավարության եւ իր անունից շնորհավորեց հոբելյարին. «Բոլոր կրթերի առկայության պարագայում էլ Ֆադեյ Սարգսյանի հայտնվելը հանդարտություն ու հավասարակշռություն է հաղորդում, քանի որ ինքն այդպիսին է, եւ ճիշտ որոշումներ կայացնելու հնարավորություն է ընձեռում: Երջանիկ եմ նրա հետ աշխատելու հնարավորություն ունենալու համար: Ֆադեյ Սարգսյանը կարողանում է ջերմ, մարդկային, թիմային մթնոլորտ ստեղծել»:

Հոբելյանի կապակցությամբ Ֆադեյ Սարգսյանին շնորհվեցին մի քանի շքանշաններ, այդ թվում եւ ՀՀ կրթության նախարարության ոսկե մեդալը, ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի Գեորգիեւյան խաչը:

ՀԹՄՄ-ն բարձրագույն պարգեւը՝ «Ադամանդակոտ Արարատը» Ֆադեյ Սարգսյանին շնորհել է 5 տարի առաջ, իսկ երեկ շնորհեց միության հուշատախտակը, որը երկրորդն է, առաջինը շնորհվել է 100-ամյա թեքեյանցու՝ Սուրեն Աբրահամյանին:

Մեծարման երեկոն ավարտվեց հոբելյարի խոսքով. «Այսօրը այսկերպ նշելու համաձայնությունս տվեցի, որպեսզի շնորհակալություն հայտնեմ բոլոր նրանց, ովքեր իմ կյանքի ընթացքում եղել են կողքիս ու նպաստել հաջողությունների հասնելուն»:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ